ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Արթուր Մարտիրոսյան, Կարեն Մնացականյան, Արտակ Պողոսյան, Արտաշես Թորոսյան, Սաթենիկ Մկրտչյան և Արմեն Հովհաննիսյան

2. Զբաղեցրած պաշտոն(ներ)ը

Արթուր Մարտիրոսյան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ,

Կարեն Մնացականյան - ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության արտաքին կապերի և սփյուռքի
վարչության սփյուռքի հետ կապերի բաժնի պետ

Արտակ Պողոսյան - «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

Արտաշես Թորոսյան - «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Սաթենիկ Մկրտչյան - «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» հիմնարկի տնօրեն

Արմեն Հովհաննիսյան - «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի

տրանսպորտային բաժնի աշխատակից

3. Գործուղման վայրը և ժամկետները

Թբիլիսի, Վրաստան 2021թ հոկտեմբերի 20-22-ը

4. Հրավիրող կողմը

Վրաստանի կրթության և գիտության նախարարություն

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Վրաստանի կրթության և գիտության նախարարության միջև

փոխըմբռնման հուշագիր կնքելու , ինչպես նաև քննարկելու կրթության ոլորտում փոխհամաձայնության շրջանակներում համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունները

6. Քննարկված թեմաները

Կողմերը քննարկել են

.Դպրոցական սննդի ապահովման գործընթացում փորձի փոխանակմանը

.Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոնի գործունեությանն առնչվող հարցեր, կրթական բարեփոխումների առանձնահատկությունները

. միջազգայնորեն ընդունված չափանիշներին համապատասխան պետական հանրակրթական ծրագրերի արդիականացում՝ STEM ուսուցում,
. հանրակրթական դպրոցների ուսուցիչների կարողությունների հզորացում՝ վերապատրաստման և ատեստավորման նոր մոտեցումներ,
. դպրոցական աշակերտների տվյալների բազայի կառավարում, պարտադիր հանրակրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտում և ուղղորդման մեխանիզմների ներդրում,
. հեռավար ուսուցում և ՏՀՏ կիրառում հանրակրթության ոլորտում,
. օտար լեզվի խորացված ուսուցում հանրակրթական դպրոցներում,
. հանրակրթական դպրոցներում «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի իրականացում,
.միջպետական համագործակցության շրջանակներում տրամադրվող կրթաթոշակներ

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հայկական պատվիրակությունը հանդես է եկել կրթական ոլորտին վերաբերող մի շարք զեկույցներով, մասնավորապես՝ «Պետական հանրակրթական ծրագրերի արդիականացում՝ միջազգայնորեն ընդունված չափանիշներին՝ STEM կրթություն», «Միջին դպրոցի ուսուցիչների մասնագիտական զարգացում. դասավանդման և ատեստավորման նոր մոտեցումներ», «Հեռավար ուսուցում և SS կիրառումը դպրոցներում», «Դպրոցական սննդի ծրագրի իրականացումը», «Ուսուցիչների վերապատրաստման համատեղ ծրագրի իրականացում, դպրոցներում հայերենի և վրացերենի ուսուցում», «Համատեղ կրթամշակութային արտադպրոցական ծրագրերի իրականացում», «Միջպետական համագործակցության շրջանակում տրամադրվող կրթաթոշակներ»: Այցի

շրջանակում հայկական պատվիրակությունն այցելել է Թբիլիսիի թիվ 103 դպրոց, որտեղ գործում են հայկական դասարաններ: ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը ողջունել է աշակերտներին, մանկավարժներին, հետաքրքրվել նրանց հուզող հարցերով և ընթացիկ խնդիրներով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Վրաստանի կրթության և գիտության նախարարության միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր: Ստորագրող կողմերն էին ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը և Վրաստանի կրթության և գիտության նախարարի առաջին տեղակալ Եկատերինե Դգեբուաձեն: Ըստ հուշագրի՝ համագործակցությունը կընդլայնվի մի քանի ուղղությամբ. կողմերը կնպաստեն երկու երկրների ուսուցիչների վերապատրաստման և գնահատման համակարգերի կատարելագործման նպատակով փորձի փոխանակմանը, ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող գնահատման և թեստավորման կենտրոնն աջակցություն կցուցաբերի 100 հարցերից բաղկացած առաջադրանքների բանկի մշակմանը՝ նախատեսված Վրաստանի դպրոցներում աշխատող հայոց լեզվի և գրականության ուսուցիչների մասնագիտական որակավորման քննության համար:

9. Ձեռք է բերվել պայմանավորվածություն ընդլայնել համագործակցությունը Հայաստանում և Վրաստանում գործող համապատասխան կառույցների միջև, որի արդյունքում կմշակվեն համագործակցության հստակ գործողություններ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

26.10.2021 Արթուր Մարտիրոսյան

Recoverable Signature

X

ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Signed by: MARTIROSYAN ARTUR 4110790255